# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

# ՀՐԱՄԱՆ № 72

«14» 07 2020 թ.

ք. Երևան

## ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ Արմեն Հրանտի Հարությունյանին զբաղեցրած պաշտոնից ազատելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի պաշտոնակատարի 10.07.2020թ. N 224-Ա և Արմեն Ալբերտի Աֆանդյանին նույն պաշտոնում նշանակելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 13.07.2020թ. N 226-Ա հրամանները և այն, որ անհրաժեշտ է կատարել Ա.Հարությունյանի մոտ առկա վարույթների, փաստաթղթերի ու գույքի հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

**Հրամայում եմ՝**

1. Կատարել Ա.Հարությունյանի կողմից՝ իր մոտ առկա վարույթների, փաստաթղթերի ու գույքի հանձնում, իսկ Ա.Աֆանդյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

***Հանձնախմբի ղեկավար՝***

Մելքոնյան Դավիթ - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ

***Հանձնախմբի անդամներ՝***

Մարտիրոսյան Հայկ - Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ

Սարգսյան Հայկանուշ - Հայաստանի Հանրապետության գլխավոր

| | |
|---|---|
| | վերահսկողական և իրավական ապահովման վարչությանն աջակցող բաժնի պետ |
| Քոչարյան Նարինե - | Հայաստանի Հանրապետության դատախազության ընդհանուր բաժնի պետ |
| Խալաթյան Նաիրա - | Հայաստանի Հանրապետության դատախազության արխիվի բաժնի պետ |
| Բաղդասարյան Լևոն - | Հայաստանի Հանրապետության դատախազության առաջին բաժնի պետ: |

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2020 թվականի հուլիսի 30-ը:

**Ա.ԴԱՎԹՅԱՆ**